ՀՀ ՍՓԻՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՆՈՒՇ ՅԱԿՈԲԵԱՆԻ ԽՕՍՔԸ «ՄԽԻԹԱՐ ԵՒ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԸ. ԴՊՐԱՆՈՑ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ» ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

Գերապայծառ Տէր Լեւոն արքեպիսկոպոս Զէքիեան,
Մխիթարեան միաբանութեան հոգեւոր հայրեր,
Յարգելի ներկաներ,

Ջերմութեան եւ հպարտութեան զգացումով շնորհաւորում եմ ձեզ «Մխիթարը եւ Մխիթարեանները. դպրանոց քրիստոնէական լուսաւորութեան» *գիտաժողովի կազմակերպման առթիւ։ Յիրաւի, Մխիթար Աբբահօր եւ նրա աշակերտների կեանքի եւ գործունէութեան վերաբերեալ գիտական մակարդակով այս քննարկումը կարեւոր նշանակութիւն ունի ոչ միայն հոգեւոր կեանքում, այլեւ հայագիտութեան զարգացման համար։*

Մխիթարեան միաբանութիւնը երեք դար շարունակ Իտալիայի հիւրընկալ հողում Հայոց պետականութեան բացակայութեան պայմաններում ստանձնել է կարեւոր դերակատարութիւն՝ սատար կանգնելով օտար տիրապետութիւնների ներքոյ մաքառող հայ ժողովրդի բեկորներին՝ նրանց ծանր եւ օրհասական պահերին։ Այդ բարեացակամ վերաբերմունքն էր, որ ոգեւորեց Մխիթար Աբբահօր Սուրբ Ղազար կղզում հիմնադրելու հոգեւոր-մշակութային անմար այս կենդրոնը, որ պէտք է դառնար հայ-իտալական բարեկամութեան խորհրդանիշ, հպարտութեան առարկայ, գրօսաշրջութեան գեղեցիկ վայր։

Դարեր շարունակ քրիստոնեայ հային ոգի եւ ոյժ է փոխանցել հոգեւորականը՝ նրա հոգում սերմանելով ազգային եւ բարոյական հունտեր։ Այդ հոգեւորականների մէջ իւրովի առանձնանում, հզօրանում եւ անհաս է թուում նոյնիսկ երեք հարիւր տա-

րի անց էլ Մխիթար Սեբաստացին։ Եւ դժուար է պատկերացնել մեր գիտութեան եւ մշակոյթի պատմութեան վերջին երեք դարն առանց Մխիթարեան միաբանութեան, բոլոր ժամանակների հոգեւորականների, որոնք իրենց ստեղծած գրականագիտական, լեզուագիտական, պատմագիտական աշխատութիւններով մնայուն ժառանգութիւն թողեցին հայոց մշակոյթի պատմութեան մէջ։

Մխիթար Աբբահօր կերպարի հետ է նոյնացւում հայի ինքնութեանը ճակատագրական սպառնացող պահին անձնազոհութեամբ յանձն առնելու բացառիկ կամային բարձր յատկանիշները, որի արդիւնքը դարձաւ հայ կրթական հատուածի նորովի վերընձիւղումը։ Հայոց պատմագիտութիւնը, աստուածաբանութիւնը եւ մշակութաբանութիւնը դեռ շատ բան ունեն հետազօտելու, արժեւորելու եւ սերունդներին փոխանցելու Մխիթար Աբբահօր կերպարին բնորոշ արժանիքները, նրա ստեղծած հոգեւոր եւ մշակութային ժառանգութիւնը։

Մխիթարեան միաբանութեան հարիւրամեակների պատմութիւնը միմիայն ներշնչում է ազգային հպարտութիւն։ Գիտական եւ կաճառական մեծ ներուժով այս կառոյցը, լենելով եւրոպական արժէքների կրող հաստատութիւն, միաժամանակ ազգային եւ հոգեւոր կենտրոն ու հայրենաշունչ վայր եւ քրիստոնէական լուսաւորութեան դպրանոց, որտեղ իրենց հայեցի, աստուածաբանական կրթութիւնն ու կաճառական ճանաչումն են ստացել ոչ միայն անուանի հոգեւորականներ, այլ նաեւ նուիրեալ հայագէտներ։

Յանկանում եմ գիտաժողովի մասնակիցներին մաղթել բեղուն եւ արգասաբեր աշխատանք։ Թող Աստծոյ Ամենակարող Աջը միշտ հովանի լինի Մխիթարեան միաբանութեանը, անխոնջ ու նուիրեալ հոգեւոր հայրերին եւ Զե՛զ յարգարժան Սրբազան Հայր, Գերապայծառ Տէր Լեւոն արքեպիսկոպոս Զէքիեան։

Յարգանքով՝

ՊԱՇՏՕՆԱԿԱՏԱՐ
ՀՐԱՆՈՅՇ ՅԱԿՈԲԵԱՆ